Շրջագայություն տաճարում

Բարի գալուստ տաճար

Տաճարի ներսում մենք կարող ենք սովորել փրկության ծրագրի մասին և ուխտեր կապել Երկնային Հոր հետ: Կան շատ գեղեցիկ սենյակներ, որտեղ մենք կարող ենք խաղաղություն զգալ Սուրբ Հոգուց:

Հելսինկիի (Ֆինլանդիա) տաճարը

Մկրտության ավազանը այն վայրն է, որտեղ դուք կարող եք մկրտվել մահացածների համար: Ավազանի շուրջը տասներկու ցուլերը ներկայացնում են Իսրայելի տասներկու ցեղերը:

Հարսի սենյակը այն վայրն է, որտեղ կանայք պատրաստվում են նախքան կնքվելը:

Այդահո Ֆոլսի (Այդահո) տաճարը

Ուրդենետայի (Ֆիլիպիններ) տաճարը

Կնքման սենյակը այն վայրն է, որտեղ զույգերն ու ընտանիքները միասին կնքվում են ժամանակի և հավերժության համար:

Քոբանի (Գվատեմալա) տաճարը

Ուսուցման սենյակը այն վայրն է, որտեղ դուք սովորում եք փրկության Ծրագրի մասին և սրբազան ուխտեր եք կապում Երկնային Հոր հետ:

Սելեստիալ սենյակը օգնում է մեզ մտածել, թե ինչպիսին կլինի Երկնային Հոր հետ կրկին ապրելը: Այն աղոթելու, խորհելու և սուրբ գրությունները կարդալու վայր է:

Օկինավայի (Ճապոնիա) տաճարը

ՏԱՃԱՐԻ ՆՇՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

Կարո՞ղ եք այս իրերը գտնել տաճարի ներսում:

- ☐ ջահ
- ☐ հայելի
- ☐ ծաղկաման
- ☐ մկրտության ավազանի ցուլեր
- ☐ գունավոր ապակի